



«Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ

ԼԻՑԵՆԶԻԱ 001112

ՀՀ ք. Երևան, Նոր Նորք,

Բորյան փ., զ. 4/1, Բն. 24

Հեռ.՝ 077 – 27 – 97 – 57

Էլ. Փոստ՝ a-r.project@mail.ru

“A-R PROJECT” LLC

LICENSE 001112

RA c. Yerevan, Nor Norq,

Boryan street 4/1, Ap. 24

Tel՝ 077 – 27 – 97 – 57

e-mail a-r.project@mail.ru



N 12/15

«25» 46 հոկտեմբեր 2025թ.

Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ N «ՀՀՏՄ-ՄԱԾՁԲ-25/16»

Նախագծող՝ «Ա – ԷՆ Փրոջեկտ» ՍՊԸ

Տնօրեն՝ Կ. Պողոսյան

<<Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ>> ՍՊԸ -ն նախագծային պարզ փորձաքննության դիտարկելով ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 3 հիմնական դպրոցի 0,71 հա տարածքում ֆուտբոլի, բասկետբոլի /նաև վոլեբոլի/ դաշտի կառուցման, ինչպես նաև դպրոցին ու թաղամասին սպասարկող պարունակի մանկական դաշտի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:

Առդիր՝ եզրակացություն՝ Տ. Լ. Չիգ:

Տնօրեն՝



Ա. Գրիգորյան



«Ա-ԷՆ ՓՈՒՋԵԿՍ» ՍՊԸ

Տնօրեն՝

Ա.Գրիգորյան

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևանի թիվ 3 հիմնական դպրոցի 0,71 հա տարածքում ֆուտբոլի,բասկետբոլի /նաև վոլեբոլի/ դաշտի կառուցման,ինչպես նաև դպրոցին ու թաղամասին սպասարկող պուրակի,մանկական դաշտի կառուցման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթեր

Պատվիրատու՝ ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմ N «ՀՀՏՄ-ՄԱԾՁԲ-25/16 »
Նախագծող՝ «Ա – ԷՆ Փրոջեկտ» ՍՊԸ
Տնօրեն՝ Կ.Պողոսյան

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքի և ճարտարապետահատակագծային առաջադրանքի հիման վրա:

Նախագծի կազմում ներառված է

- 1.Ճարտարապետական լուծումներ
- 2.Կոնստրուկտորական լուծումներ
- 3.Ինժինեռական լուծումներ

Ելակետային տվյալներ

- 1.Նախագծային կազմակերպության աշխատակազմի արտոնագրերի պատճները/ճարտարապետ / ՀՀ քաղաքաշինության կողմից տրամադրված լիցենզիայի պատճենները:
- 2.Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման սեփականության վկայականը կադաստրային ծածկագիրը՝ 11-001-0109-0012
վկայականի համարը N 14022017-11-0005:

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Անշարժ գույքի գտնվելու վայրը՝ ՀՀ Տավուշի մարզ,համայնք Իջևան ք,Թուխիկյան փողոց 25
Կադաստրային ծածկագիր-11-001-0109-0012
Հողամասի մակերեսը՝ 2,23248 հա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

Տեխնիկա-տնտեսական ցուցանիշներ

Հանդերձարանի մասնաշենքի կառուցում - 216.0 ք.մ

Ֆուտբոլի դաշտի կառուցում - 4890.0 ք.մ

Ընդհանուր կառուցապատման մակերեսը - 5536ք.մ

Հողամասի ընդհանուր մակերեսը - 22324.85 ք.մ

Նախագծով նախատեսված է Ֆուտբոլի դաշտի կառուցում,
Բասկետբոլի դաշտի կառուցում՝ նախատեսված նաև վոլեյբոլի խաղերի համար,
Մանկական մարզական խաղահրապարակի կառուցում, Մարզական դաշտերը
նախատեսված են դպրոցականների ֆիզիկական դաստիարակության,
արտադպրոցական մարզական գործունեության, ինչպես նաև թաղամասի բնակիչների ազատ
ժամանակի կազմակերպման համար: Դաշտերի նախագծումը իրականացվել է
ժամանակակից մարզական պահանջներին համապատասխան՝ ապահովելով
անվտանգություն, ֆունկցիոնալություն և հարմարավետ շահագործում:

Խաղադաշտի հարակից հատվածում նախատեսվում է հանդերձարանի շինություն՝ 216 մ²
ընդհանուր մակերեսով, որտեղ առանձնացված են հանդերձարանները, լոգախցիկները և
սանհանգույցները: Հանդերձարանի հարակից տարածքում նախատեսվում է ժամանցի
համար կանաչապատ տարածք, ինչպես նաև բասկետբոլի դաշտ, որը կարող է օգտագործվել
նաև վոլեյբոլի խաղերի համար: Բացի այդ, առանձնացված է ավտոճանապարհային մուտք
908.0քմ՝ դեպի ֆուտբոլի դաշտ՝ ապահովելով անվտանգ և հարմար մոտեցում սպասարկման
և շահագործման նպատակներով:

Ընդհանուր բարեկարգման մակերեսը - 844ք.մ

Կանաչապատ տարածք - 2204.7 քմ:

ԿՈՆՍՏՐՈՒԿՏՈՐԱԿԱՆ ՄԱՍ

Գրունտի սառչման առավելագույն խորությունը, համաձայն ՀՀՇՆ II-7.01.2011 նորմերի,
ուսումնասիրվող տարածքում կազմում է 90 սմ:

· Քամու արագությունը 25 տարվա ընթացքում 26 մ/վ է, 50 տարվա ընթացքում 28 մ/վ:

· Քամու նորմատիվային ճնշումը՝ 30 կգու/մ2 /է:

· Ձյան նորմատիվային ճնշումը՝ 50 կգու/մ2 /է:

· Շենքերի հիմքերը տեղադրված են <<ավագ, ավագահող, մանրքարավազ լցնով>> գրունտի
վրա : Գրունտն ըստ շահագործման դժվարության՝ համաձայն СНиП IV-5-82-ի III կարգ է:

· Ըստ սեյսմիկ հատկության ՀՀՆՆ 20.04.2020թ տեղազննվող շրջանը գտնվում է I սեյսմիկ
գոտում՝ գրունտների $A_{max} = 0.3g$ արագացմամբ:

Շենքի հիմնակմախքը շրջանակային է:

- Հիմքերը միաձույլ ե/բ հիմնային հեծաններ են ուղղանկյունաձև կտրվածքի միմյանց
փոխիսաչվող 60x50 սմ հատվածքով: Կոնստրուկցիաների երկայնական ամրանները A500C
դասի են, լայնականները՝ A240:

- Սյուները՝ 40x40 սմ հատվածքի ե/բ միաձույլ տարրեր են ամրանավորված A500C դասի
երկայնական և A240 դասի լայնական ամրաններով:

- Պարզունակները 40x50սմ հատվածքի ե/բ միաձույլ տարրեր են ամրանավորված A500C դասի երկայնական և A240 դասի լայնական ամրաններով:
- Ծածկը միաձույլ ե/բ պարագծով հենված սալ է, 16 սմ հաստությամբ, կրկնակի ամրանավորված A500C երկայնական և A240 դասի լայնական ամրաններով:
- Շինության արտաքին պատերն իրականացված են երկշերտ խամքարաբետոնե բլոկներից, ամրանավորված՝ A500C դասի ամրաններով:
- Սեյսմիկ գոտին ՀՀՇՆ 20.04.2020-ի 1-ին
- Գրունտի հորիզոնական արագացում 0.3 g
- Գրունտային պայմանի գործակից 0.8
- Թույլատրելի վնասվածության գործակից 0.40
- Հարկի շեղվածքի մեծություն 1/200
- Պատասխանատվության գործակից 1.30
- Շենքի տատանման պարբերությունը $T_x = 0.2699$ վրկ.
- Շենքի տատանման պարբերությունը $T_y = 0.2745$ վրկ.
- Շենքի առավելագույն տեղափոխությունը $\Delta/x = 12.2$ մմ
- Շենքի առավելագույն տեղափոխությունը $\Delta/y = 12.6$ մմ

Շենքի հարկի շեղվածքներից առավելագույնի արժեքը կազմում է 17.0 մմ, որը բավարարում է ՀՀՇՆ 20.04.2020-ի կետ 6 ադ. 8-ի պայմաններին այն է՝ 1/200

Շենքի սեփական զանգվածը կազմում է - $P_z = 330.432$ տ

Սեյսմիկ լայնական ուժերի գումարը հիմքի վերին մակարդակում կազմում է՝ $P_x = 55.911$ տ, $P_y = 55.877$ տ: Տվյալ հասցեում նախատեսվում է կառուցել նաև արհեստական խոտածածկով ֆուտբոլի դաշտ և ցանկապատ:

ԷԼԵԿՏՐՈՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱՍ

Ընդհանուր հաշվարկային հզորությունը կազմում է 7,5կՎտ
Սպառիչների լարումը 380/220 Վ

Էլ,Էներգիայի բաշխումը եռաֆազ ցանցերում նախատեսված է իրականացնել 4 ջղանի L1,L2,L3,N միաֆազ ցանցերում 3 ջղանի մալուխներով L1,N,PE:

Հանդերձարանի բաշխիչ վահանը նախատեսված է միաֆազ,որը սնուցում է հիմնական լուսավորության վահանից:

ՈՌՈԳՈՒՄ

Դպրոցի կանաչ տարածքների ոռոգման ցանցի նախագիծը կատարվել է ըստ պատվիրատուի կողմից տրված առաջադրանքի, որի հիման վրա նախագծվել է ոռոգման նոր ցանց՝ ՊԵ խողովակներով Ø50–25 մմ, 10 մթն ճնշմամբ: Առաջադրանքով նախատեսվում է իրականացնել թիվ 3 դպրոցի կանաչ տարածքների ոռոգման համակարգի արդիականացում՝ նախագծելով նոր ոռոգման ցանց, որի միացման հանգույցը գտնվում է դիմացի այգու տարածքում: Ցանցի վրա նախատեսվում է միացման հանգույց Ø50x50՝ Ø50 փականով: Դպրոցի ամբողջ կանաչ գոտու մակերեսով նախատեսվել է ոռոգման ցանց ըստ ուղղությունների և ըստ տրամագծերի: Արահետների հատման հատվածներում նախատեսվում են պողպատե պատյաններ, իսկ ճյուղավորումների հատվածներում՝ փականներ ըստ տրամագծերի և նորմատիվային հեռավորությունների:

Ոռոգման գլխանոցները նախատեսվում են Ø25, տեղադրվող խողովակաշարերը՝ ստորգետնյա տեղադրմամբ:

Տեղադրման տակ պարտադիր նախատեսվում է ավազային նախապատրաստական շերտ: Խողովակաշարերը տեղադրելուց և միացումները կատարելուց հետո իրականացվում է ետլիցք տեղական բնահողով: Նախագծով մշակվել են համապարփակ հատակագծային լուծումներ, որոնք նախագծային հիմքից վերցված են առանձին թերթով՝ աշխատանքների իրականացմանը և համակարգի պատկերացմանը աջակցելու նպատակով: Աշխատանքների կատարման ժամանակ պարտադիր հրավիրվում է տվյալ տարածքը սպասարկող կանաչապատման ՊՈԱԿ-ի ներկայացուցիչը:

Աշխատանքները ավարտելուց հետո նախատեսվում է համակարգի փորձարկում և հանձնման ակտով հանձնում պատվիրատուին: Արտակարգ կամ վթարային հանգույցների առկայության դեպքում պարտադիր է թերությունների վերացում:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՑԱՆՑ

Համաձայն պատվիրատուի կողմից տրամադրված ջրագծի միացման կետի, իրականացվել է ջրամատակարարման ցանցի նախագիծ: Միացման կետում նախատեսվում է DN1000 դիտահոր, որի մեջ նախատեսված է գոտի միացում 50×50, որից հետո՝ կցամաս 50×40 և փական Ø40: Նախագծվող ջրագծի վրա՝ միացման կետից 41 մ հեռավորության վրա, նախատեսվում է փականային հոր Ø1500, որտեղ տեղադրվում է քարաբաշխիչ, որի վրա երեք ուղղություններով նախատեսվում են ականոցներ Ø50 և սողնակներ Ø50, որոնց միջոցով կարգավորվում է ցնցուղաբանի ջրամատակարարումը, ինչպես նաև աջ և ձախ ուղղություններով ոռոգման ցանցի սնուցումը: Սպառողի պարիսպի մոտ նախատեսվում է ջրաչափական հոր DN1000 մմ, որտեղ տեղադրվում են կցամաս 32×50, փական, ջրաչափ և ֆիլտր Ø32: Ցանցերի համար նախատեսվում են պոլիէթիլենե խողովակներ DN50 մմ: Թաղման միջին խորությունը հողի նշակից ընդունվում է 1.10 մ, պարտադիր ավազային նախապատրաստական շերտով:

Դիտարկելով փորձաքննության ներկայացված նյութերը «Ա-ԷՌ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն նշում է, որ՝

1. Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրհենադրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:
2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան:
3. Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանում է ՀՀ քաղշին, նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին:
4. Նախագծային լուծումներին առնչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

Ուսումնասիրելով ներկայացված նախագծերը

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, Նախագիծը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

Տնօրեն

Ա.Գրիգորյան

Ճարտարապետ

Հ.Բաբայան

Կոնստրուկտոր

Ա.Գրիգորյան

Ճարտարագետ

Գ.Մադաթյան

Ճարտարագետ

Վ.Բապիրյան

